Մամուլի հաղորդագրություն
Հոկտեմբերի 30, 2023

ՔՈԱՖ-ը 10 մլն եվրո դրամաշնորհ կստանա Սյունիքի մարզում կրթությունը վերափոխելու նպատակով

ԲՐՅՈՒՍԵԼ — «Հայաստանի մանուկներ» հիմնադրամը (ՔՈԱՖ) Եվրոպական հանձնաժողովի կողմից Եվրոպական ներդրումային բանկի միջոցով կստանա 10 մլն եվրո ներդրումային դրամաշնորհ Սյունիքի մարզում երկու ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոն հիմնելու նպատակով: Հոկտեմբերի 25-ին Բրյուսելում ԵՄ հանձնակատար Օլիվեր Վարհեյը և Եվրոպական ներդրումային բանկի փոխնախագահ Թոմաս Օստրոսը ստորագրել են դրամաշնորհի հատկացման համաձայնագրի վերջնականացման մասին հայտարարությունը: Արարողությանը ներկա են եղել ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը, ՔՈԱՖ-ի գլոբալ տնօրեն Արա Բարսամը և գործադիր տնօրեն Լիանա Ղալթաղչյանը:

Այս համագործակցությունը հնարավորություն կտա Սյունիքի մարզի երեխաներին ստանալ միջազգային չափանիշներին համապատասխան արտադպրոցական կրթություն, մասնավորապես՝ Կապան և Գորիս համայնքերում կկառուցվի ոչ ֆորմալ կրթության և ուսուցիչների վերապատրաստման երկու գերժամանակակից ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոն:

3-18 տարեկան ավելի քան 6,000 երեխա և երիտասարդ հնարավորություն կունենան ներգրավվել ամենատարբեր ուղղվածությամբ կրթական ծրագրերում, այդ թվում՝ օտար լեզուներ, ձեռներեցություն, ճարտարագիտություն, աթլետիկա: Հասանելի կլինեն նաև սոցիալական և հոգեբանական անվճար ծառայություններ, միջազգային փորձագետների կողմից կանցկացվեն դասընթացներ:

Դեռևս 2018 թվականին Լոռու մարզում գործարկված ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնը ոչ ֆորմալ կրթության հաջողված նախաձեռնության վառ օրինակ է, որը նպաստել է Հայաստանի գյուղական համայնքներում կրթության բարելավմանն ու զարգացմանը: Գործունեության 5 տարիների ընթացքում Լոռու ՍՄԱՐԹ կենտրոնը սպասարկել է ավելի քան 4,000 ուսանողի 28 բնակավայրից:

Սյունիքում երկու ՍՄԱՐԹ կենտրոնների ստեղծումը սերտորեն կապված է «Ներդրումներ կրթության մեջ, հատկապես Սյունիքի մարզում» նախաձեռնության հետ՝ որպես

Եվրոպական միության Արևելյան գործընկերության Հայաստանի համար տնտեսական և ներդրումային ծրագրի բաղադրիչ: Այն նաև հանդիսանում է «Դիմակայուն Սյունիք Թիմ Եվրոպա» նախաձեռնության անբաժանելի մասը, որի շրջանակում աջակցություն է տրամադրվում Հայաստանի հարավային շրջանների սոցիալ-տնտեսական դիմակայության բարձրացմանը. այս տարածաշրջանն ամենաշատն է տուժել 2020-ի ռազմական գործողություններից և 2023թ. արցախահայերի զանգվածային տեղահանությունից:

Հարևանության և ընդլայնման հարցերով ԵՄ հանձնակատար Օլիվեր Վարհեյը նշել է. «Այսօրվա հայտարարությունը ևս մեկ ապացույցն է ԵՄ հանձնառության՝ աջակցելու Հայաստանի կողմից կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներին՝ բարձրացնելով որակը, արդիականացումը և համապատասխանությունը տնտեսության և հասարակության պահանջներին: Կրթությունն առաջնահերթություն է Հայաստանի համար Տնտեսական և ներդրումային պլանի ուղենիշային ծրագրերի ներքո, և ես ուրախ եմ տեսնել, որ Սյունիքի մարզում ոչ ֆորմալ կրթության երկու կենտրոնների կառուցումն իրականություն է դառնում: Այն կնպաստի գյուղական համայնքներում կրթության որակի և աշխատուժի զարգացմանը, ինչպես նաև կօգնի Հայաստանի երիտասարդներին, ներառյալ՝ խոցելի խմբերին, լինել մրցունակ աշխատաշուկայում: Սա Հայաստանի կրթության ոլորտում ԵՄ համապարփակ մոտեցման մի մասն է, որի շրջանակում մենք վերջերս հատկացրել ենք 32 միլիոն եվրո՝ որպես բյուջետային աջակցություն կրթության ռազմավարության իրականանացմանը»:

Ընդգծելով նման կրթական կենտրոնների հիմնադրման կարևորությունը, ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանն ասել է. «Այսօր կարևոր քայլ է ձեռնարկվել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում կառուցվելիք և ՔՈԱՖ-ի կողմից գործարկվող 2 ոչ ֆորմալ կրթական կենտրոնների իրագործման ուղղությամբ: Սա կարող է օգնել ավելի ամրապնդել կապը ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության միջև:: Ավելին, այս կենտրոնների կառուցումը Սյունիքում կնպաստի Հայաստանի հարավային շրջանների զարգացման ավելի մեծ նպատակի իրագործմանը»:

ԵՆԲ նախագահ Վերներ Հոյերն ավելացրել է. «Որպես ԵՄ բանկ, մենք նվիրված ենք աջակցելու Հայաստանում մարդկային կապիտալի, տնտեսական դիմակայունության և սոցիալական համախմբվածության զարգացմանը՝ ԵՄ առաջնահերթություններին համահունչ: «Թիմ Եվրոպա» նախաձեռնությունը ոչ միայն ներդրում է հայ երեխաների համար ավելի լավ կրթական համակարգի ստեղծման և Հայաստանի ապագայի համար, այլև խթան է երկրում քաղաք-գյուղ տարաձայնությունների և գենդերային բացերի կրճատման համար»:

ՔՈԱՖ-ի գլոբալ գործադիր տնօրեն Արա Բարսամը կարևորել է նախաձեռնությունը՝ նշելով. «Սա առանցքային ներդրում է Հայաստանի ապագայի համար: Հավատարիմ մնալով որակի և նորարարության ամենաբարձր չափանիշներին՝ ՔՈԱՖ-ն իր ջանքերն ուղղում է հայ երիտասարդների համար հնարավոր լավագույն կրթության ապահովմանը»:

ՔՈԱՖ-ի գործադիր տնօրեն Լիանա Ղալթաղչյանը, ընդգծելով նախաձեռնության կարևորությունը Հայաստանի համար, շեշտել է. «Սյունիքում ՍՄԱՐԹ կենտրոնների հիմնումը Հայաստանի համար կենսական նշանակություն ունի, հատկապես ներկայիս իրավիճակում»:

Այս նախաձեռնությունն արտացոլում է Եվրոպական հանձնաժողովի, Եվրոպական ներդրումային բանկի և «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի համատեղ հանձնառությունը՝ խթանելու կրթությունը, տնտեսական կայունությունը և սոցիալական զարգացումը Սյունիքի մարզում:

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղական բնակչության կյանքի որակը՝ կենտրոնանալով մասնավորապես երեխաներին և երիտասարդներին վերաբերող ծրագրերի և կարիքների վրա: ՔՈԱՖ-ի զարգացման թիրախային ոլորտներն են կրթությունը, առողջապահությունը, ինչպես նաև սոցիալական և տնտեսական զարգացումը: ՔՈԱՖ-ը մեկնարկել է իր ծրագրերը *2004*թ.-ին՝ սկսելով մեկ գյուղից և ընդլայնվելով Հայաստանում ու Արցախում՝ ավելի քան *82* համայնքներում՝ ներդնելով ավելի քան *70* մլն ԱՄՆ դոլար՝ *100,000*-ից ավել գյուղաբնակ շահառուների համար:

ԵՆԲ Գլոբալը ԵՆԲ խմբի նոր մասնագիտացված թևն է, որը նվիրված է միջազգային գործընկերությունների և զարգացման ֆինանսավորման ազդեցության մեծացմանը Եվրոպական միության սահմաններից դուրս: ԵՆԲ Գլոբալը նախագծված է Թիմ Եվրոպա նախաձեռնության շրջանակներում կուռ, կենտրոնացված գործընկերության խթանմանը, ինչպես նաև, որպես Գլոբալ դարպասներ ռազմավարության մաս, ֆինանսական հաստատությունների և քաղաքացիական հասարակության հետ միասին դրանց զարգացմանը: ԵՆԲ Գլոբալն՝ ամբողջ աշխարհում մեր գրասենյակների միջոցով ԵՆԲ խումբն ավելի մոտ է դարձնում տեղի մարդկանց, ընկերություններին և հաստատություններին

«Global Gateway» (Գլոբալ դարպասներ) համաժողովն առաջին անգամ է անցկացվում միավորելով Եվրոպական միության և ամբողջ աշխարհի կառավարությունների ներկայացուցիչներին, ինչպես նաև մասնավոր հատվածը, քաղաքացիական հասարակությունը, ֆինանսական հաստատությունները և միջազգային կազմակերպությունները ներկայացնող հիմնական շահագրգիռ կողմերին և մտքի առաջնորդներին: Համաժողովի միջոցով նրանք խրախուսում են գլոբալ ներդրումներ փոխակերպվող՝ կոշտ և փափուկ ենթակառուցվածքում՝ կայուն զարգացման նպատակներին հասնելու համար:

«Global Gateway» (Գլոբալ դարպասներ) նախաձեռնությունը Եվրոպական միության ռազմավարությունն է՝ նվազեցնելու համաշխարհային ներդրումային բացը՝ խթանելով խելացի, մաքուր և անվտանգ կապերը թվային, էներգետիկ և տրանսպորտի ոլորտներում և հզորացնելով առողջապահական, կրթական և հետազոտական համակարգերը: Գլոբալ դարպասների ռազմավարությունը մարմնավորում է Թիմ Եվրոպայի մոտեցումը, որը միավորում է Եվրոպական միությանը, ԵՄ անդամ պետություններին և զարգացման հարցերով եվրոպական ֆինանսական հաստատություններին: Այն նպատակ ունի *2021-2027* թվականներին մոբիլիզացնել մինչև *300* միլիարդ եվրո պետական և մասնավոր ներդրումներ՝ ստեղծելով էական կապեր, այլ ոչ թե կախվածություններ, և փակելով հ ներդրումների բնագավառում առկա ամաշխարհային ճեղքվածքը:

ՄԵԴԻԱ ԿՈՆՏԱԿՏ

Նանա Մարդոյան
ՔՈԱՖ-ի հաղորդակցության բաժնի ղեկավար
Էլ. հասցե՝ nana.mardoyan@coaf.org
Բջջ.՝ +374 55 003 723